

Թաթարներու ծրագիրը: Յետոյ բռնի ցրուելով Մահմետական Զինուորական Խորհուրդի տրամադրութեան տակ եղող թաթար զօրամասերը՝ անոնք ատով իսկ յաղթահարեցին ամբողջ Թրքութիւնը:

25 Ապրիլ 1918ին ղեկը ետ մը կը լուծէր նաեւ նախապէս կազմուած ազգային-կուլտուրական ինքնավարութիւնը, կը դրաւ էր Ուֆայի կառավարութեան միլիոններու հասնող հիմնագումարները եւ Վոլգայի եւ Ուրալի միջեւ տարածուող երկրամասը կը կցէր Ռուս Սովեթ Հանրապետութեան:

Ինչպէս յայտնի է այս եւ ուրիշ թրքական երկրամասերը յետոյ արժանացան խորհրդային ինքնավարութեան:

Քրդերի ստանի եւ Թիւրքիստանի մէջ ալ նոյն բաները պատահեցան:

Դեկտ. 1917ին Քրդերը իրենց թերթ-թօրիալ ինքնիշխանութիւնը յայտարարելու նախապատրաստական աշխատանքը աւարտած

էին արդէն: Բայց երբ անոնք իրենց պետութիւնը՝ «Ալաշ-Օրդա» իրականացնել կ'ուզէին, ստիպուեցան կռիւ մղել Ռուս եւ Քրդերը կոմունիստ ոյժերու հետ, որու հետեւանքով ոչնչացան Քրդերըներու երազները:

Թուրքիստանի մէջ Սարթերը 23 Դեկտ. 1917ին յայտարարեցին իրենց պետական անկախութիւնը: Բայց շուտով անոնք ալ նուաճուեցան Բոլշեւիկներէն, որոշ թուով տեղացի հետեւորդներու օժանդակութեամբ:

Խոքանդի արեան բաղնիքը ուր 13,000 Թիւրքիստանիներ սպաննուեցան ռուսական զնդացիներով ու թնդանօթներով, մեծ բեկում առաջ բերաւ ժողովրդի դիմադրականութեան մէջ: Թէեւ չյուսահատեցան նորէն եւ կրկին ու կրկին ապստամբեցան, մինչեւ որ յաջողեցան ձեռք բերել շատ աւելի մեծ ազատութիւն քան այդ վայելած էին ժը դարուն Ռուսաստանի կողմէ նուաճուելէն իվեր:

## ԴՐԱՄԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՌԱՄԿԱՎԱՐԱՑՈՒՄԸ

Գրեց՝ ՊՐՈՅ. Վ. ՏՈՏՈՄԵԱՆՑ

Հիւսիսային Ամերիկան այն երկիրներից մէկն է, ուր գործակցային (կօօպերատիվ) շարժումը շատ քայլ է զարգացած: Հակառակ դրան՝ այնտեղ եւս դրամատիրութեան ռամկավարացումը առաջ է քայլում: Եւ դա կատարուում է այն իւրայատուկ եղանակով, որ բանուորները եւս մասնակից են դրամատիրական ձեռնարկներին:

Այդ տեսակէտից մեզ մասնաւորապէս հետաքրքրում է այն նոր ուղին, որ տանում է դէպի բանուորների արհեստակցական միութեանց մասնակցութիւնը դրամատիրական խոշոր ձեռնարկութեանց դրամազուլուսի (կապիտալ) մէջ:

Այդ մասին մեզ տեղեկութիւններ են հաղորդում մի գերմանացի հեղինակ, Արթուր Փայլէր (Arthur Feiler) եւ մի ամերիկացի Քարվէր (Carver):

Առաջինը իր «Ամերիկա-Եւրոպա» աշխատ

տութեան մէջ (1926, Ֆրանքֆուրտ), երկրորդը՝ "Industrial Ownership, its Economic and Social Significans" (1926, Նիւ Եորք) ուսումնասիրութեան մէջ:

Վերջին տասնամեակի ընթացքում յատկապէս հանրային սպասարկութեանը նուիրուած մի քանի ձեռնարկութիւններ՝ յինչպէս են օրինակ հեռախօսային, վառելադազի, էլէքտրաքարշի, երկաթուղիների եւ այլ ընկերակցութիւնները, բայց նաեւ ամէն վարդի ճարտարարուեստային ու առեւտրական ձեռնարկութիւններ պարզորոշ ձգտում են հանդէս բերում՝ որչափ կարելի է լայն շրջաններ զբաւել դէպի իրենց ընկերութիւնները, բաժնեթուղթեր ձեռք բերել տալու ճանապարհով: Ամենից առաջ նրանք իրենց սեփական բանուորների եւ պաշտօնեանների համար ստեղծում են ամէն կարգի դիւրութիւններ եւ հնարաւոր դարձնում՝ զնել բաժնեթուղթեր: Այս վեր-